Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2012թ. հունիսի 29 նիստի

(արձանագրություն N11)

Ղեկավարվելով համալսարանի կանոնադրության 20-րդ կետի ե) ենթակետով և լսելով ու քննարկելով համալսարանի բժշկագիտության հիմունքների համահամալսարանական ամբիոնի լուծարման վերաբերյալ հարցը (զեկուցող՝ համալսարանի ուսումնագիտամեթոդական համակարգման վարչության պետ-պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյան).

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. Համալսարանի <<Բժշկագիտության հիմունքների>> համահամալսարանական ամբիոնը լուծարել:
2. Ստեղծել <<Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության>> համահամալսարանական ամբիոն:

ՌԵԿՏՈՐ ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի ՆԻՍՏԻ

(արձանագրություն N 11)

Ղեկավարվելով համալսարանի կանոնադրության 20-րդ կետի ե) ենթակետով և լսելով ու քննարկելով համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի կառուցվածքային փոփոխության վերաբերյալ հարցը (զեկուցող՝ համալսարանի ուսումնագիտամեթոդական համակարգման վարչության պետ-պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյան),

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. Գեղարվեստական կրթության ֆակուլտետի <<Երաժշտության տեսության և նրա դասավանդման մեթոդիկայի>> և <<Նվագարանների>> ամբիոնները լուծարել: Ստեղծել §Երաժշտության տեսության, դասավանդման մեթոդիկայի և նվագարանների¦ ամբիոն:
2. Գեղարվեստական կրթության ֆակուլտետի §Գեղանկարի¦ և §Գծանկարի¦ ամբիոնները լուծարել: Ստեղծել նոր §Կերպարվեստի¦ ամբիոն:

ՌԵԿՏՈՐ ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2012թ. հունիսի 29 նիստի

(արձանագրություն N11)

Ղեկավարվելով համալսարանի կանոնադրության 20-րդ կետի ե) ենթակետով և լսելով ու քննարկելով համալսարանի մանկավարժության միջֆակուլտետային և ընդհանուր մանկավարժության համահամալսարանական ամբիոնների լուծարման վերաբերյալ հարցը (զեկուցող՝ համալսարանի գիտության և հետբուհական կրթության գծով պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արա Երեմյան).

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. Լուծարել համալսարանի մանկավարժության միջֆակուլտետային և ընդհանուր մանկավարժության համահամալսարանական ամբիոնները:
2. Ստեղծել՝
   - Մանկավարժության տեսության և պատմության համահամալսարանական ամբիոն (բակալավրիատ),
   - Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության համահամալսարանական ամբիոն (մագիստրատուրա և ասպիրանտուրա):

ՌԵԿՏՈՐ ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2012թ. հունիսի 29 նիստի

(արձանագրություն N11)

Ղեկավարվելով համալսարանի կանոնադրության 20-րդ կետի ե) ենթակետով և լսելով ու քննարկելով համալսարանի ֆիզիկատեխնոլոգիական և մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետների միավորման վերաբերյալ հարցը (զեկուցող՝ համալսարանի հեռակա ուսուցման և լրացուցիչ կրթության գծով պրոռեկտոր Տիգրան Այվազյան).

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. Ֆիզիկատեխնոլոգիական և մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետները միավորել՝ կազմավորելով մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ:
2. Ընդհանուր տեխնիկական առարկաների և դրանց դասավանդման մեթոդիկայի և մեքենագիտության և նյութերի մշակման ամբիոնները միավորել՝ կազմավորելով մեքենագիտության, ընդհանուր տեխնիկական առարկաների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոն:
3. Ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնը վերանվանել տեսական ֆիզիկայի և ֆիզիկայի ուսուցման մեթոդիկայի ամբիոն:

ՌԵԿՏՈՐ ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ